Սոխրաթաղի բարյունքի արծիվը

1969-1992

դա չէր բոլորել իր քսաներեքամյակը, սակայն արդեն իսկ հասցրել էր մասնակցել ավելի քան քսաներեք հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերի: Այդ մարտերում էլ իր բացառիկ խիզախության, դեպի թշնամու դիրքերը անկասելի ու անվնեռ իր խոյանքի, զինակիցների նկատմամբ ասպետական հոգատարության համար էր դարձել թշնամու ահ ու սարսափը, մարտական ընկերների պաշտելի **Մանչը**:

Մանուկ Մարգսի Սահակյանը ծնվել է 1969 թ. հոկտեմբերին, Զվարթնոց գյուղում: Ընտանիքի չորս զավակներից կրտսերագույնը, նրբագեղ և ուշիմ պատանին ավարտել է հայրենի շենի միջնակարգը, ուսումնարանում տիրապետել հաստոցների լեզուն և աշխատավորի քրտինքով վաստակում էր իր արդար հացը, երբ վրա հասավ 1988-ի հեղափոխիչ շրջադարձը:

Երիտասարդության շեմը նոր ոտք դրած Մանուկը, որ մինչ այդ մի հրապուրանք ուներ՝ սպորտը, միախառնվեց համաժողովրդական պայքարին: Ապիճանաբար նա կոփվեց որպես մարտիկ, մանավանդ որ ազերի ելուզակները շուտով բացահայտելու էին իրենց արյունոտ դեմքը՝ Սումգայիթից մինչև Գանձակ, այնուհետև սպառնալիք դառնալով Հայաստանի սահմանամերձ շրջանների խաղաղությանն ու անվտանգությանը:

1989 թվականին նա Վարդենիսի շրջանում էր արդեն և մասնակցում էր Քելբաջարի ուղղությամբ յեռնարկվող ռազմա-հետախուզական գործողություններին: Այնուհետև նա Նոյեմբերյանի և Գորիսի շրջանների, հատկապես Կոռնիձորի կոիվների մարտիկը դարձավ, ըստ որում՝ հենց այդ ժամանակ էլ, առաջին իսկ օրից, ազատագրական մեր պայքարի մեծ հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի կողքին էր և նրա ղեկավարությամբ էլ մարտնչում էր թշնամու դեմ, վտանգված մեր եզերքների ապահովության ի խնդիր: Դժվար է մի առ մի թվարկել այն բոլոր վայրերը, որոնց ինքնապաշտպանական կոիվների կիզակետում էր հայտնվել Մանուկը. Վարդենիսի շրջան՝ Կրզլքենդ, Փամբակ, Դարա, Ենիքենդ, Կյունեշլի, Սողք, Վերին Շորժա և այլն, Շահումյանի շրջան՝ Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ, Ղարաչինար և այլն, Մարտակերտի շրջան՝ Թալիշ, Մարաղա, Լեռնինավան, Չայլու, Մատաղիս, Տոնաշեն, Մեծշեն, Կիչան, Օրթա և Բաշ Գյունեփայա, Կարմիրավան, Սրխավենդ, Նարեշտար, Չարեքտար, Աղդապան, Չայդուվուշան...

Մարտակերտի անկումից հետո Մանուկը մասնակիցն էր արդեն հայկական բնակավայրերի ազատագրման ի խնդիր մղվող անհավասար, վարչկանների վարած զրահատեխնիկայով հզորացած հայատպանների ու մյուս կողմից հայրենի հողի փրկության եռանդով բռնկված ազատամարտիկների միջև ընթացող պայքարին:

Սուրբիանի ազատամարտիկի հիզախ, իր արտաքինով հայրենի Զվարթնոցի սյուների նման ամրակուռ ու խոյակների նման նրբագեղ զինվորն, իրականում, մի քանի տարի էր, ինչ փխրուն էր առողջությամբ: Երկար ամիսներ սարերում և անտառներում, արևից խանձվելով, անչրնի ու ցյան մեջ: Եվ, սակայն, նա շարունակում էր կանգնած մնալ իր մարտական դիրքում, հրաձգարի կարճատև պահերին միայն հիշելով հիվանդանոցի ու բուժօգնություն ստանալու անհրաժեշտության մասին:

Այլ կերպ չէր էլ կարող լինել: Քանզի Մանուկն անցել էր իր հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի դպրոցը. նրա սքանչելի զինվորն էր, սակայն և ազատամարտիկ իր ընկերների համար ուսուցիչ. ամենօրյա մարզումներով ու վարժանքներով կոփվող ու որակավորումը բարձրացնող, բայց և շրջապատին վարակիչ օրինակ ու ներշնչանքի աղբյուր: Իր զինակիցների հետ մեծ հրամանատարի անմիջական մարտընկեր, նա տասնյակ ու տասնյակ մարտերում կանգնում էր առաջին կրակագծում և աննահանջ արյունարբությամբ ծանր հարված էր հասցնում թշնամուն, իր օրինակով վարակելով նորեկներին ևնպատակելով նրանց ջրդեղմանը:

Պատանեկությունից նոր-նոր երիտասարդության սեմը ոտք նետող ազատամարտիկ Մանուկ Սահակյանը «Ազատագրական բանակ»-ի ոչ թե պարզ զինվորն էր, այլ՝ գործուն մասնակիցը բանակի ծննդյան ու կայացման նախատաշատ գործի, երկրորդ սերնդի հրամանատար, որ մինչև վերջին շունչը հավատարիմ մնաց իր երդմանը՝ ծառայել հայրենիքին, պաշտպանել և վերահավաքել հայրենի հողը, ծառայել ժողովրդին, պաշտպանել և համախմբել բոլոր արյունակիցներին:

Մանուկն միշտ ասում էր. «Պայքարն այսօրվա պայքար է և վաղն արդեն ուշ է լինելու, քանզի եթե այժմ իսկ չպատրաստվենք ու չկազմակերպվենք, վաղն արդեն չենք կարողանալու մեզ հավաքել: Թուրքը չի ասում՝ սպասենք, տեսնենք վաղն ինչ է լինելու, նա անընդհատ գործում է ու գործում: Եվ ուրեմն մենք էլ պարտավոր ենք համապատասխան պատրաստություն տեսնել՝ հանուն վաղվա վերջնական հաղթանակի»: